ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱՅԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Վ. Ե. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Պլանավորման և տնտեսավարման նոր համակարգի պայմաններում հատուկ նշանակություն է ստանում հիմնական արտադրական ֆոնդերի մաշվածքի և վերականգնման օրինաչափության ուսումնասիրությունը, որի անհրաժեշտությունը պայմանավորված է ժողովրդական տնտեսության պլանավորման և հասարակական արտադրության արդյունավետության բարձրացման ուղիների հետագա կատարելագործմամբ։ Անհրաժեշտ է ստեղծագործաբար մշակել ու կատարելագործել սոցիալիստական էկոնոմիկայի զարգացման տեսության ու պրակտիկայի բոլոր հարցերը, այդ թվում նաև հիմնական ֆոնդերի ամորտիզացիայի հարցը։

Ամորտիզացիոն հատկացման գործող նորմաները չեն բավարարում գիտատեխնիկական առաջընթացի և տնտեսավարման նոր կարգի պահանջները։ Այս հարցի վերաբերյալ ավելի պարզ պատկերացում կազմելու համար դիմենք փաստացի նյութերին։

ՀՍՍՀ արդյունաբերության մեջ ամորտիզացիոն հատկացումների գումարը 1968 թ. կազմել է 66,4 միլիոն ռուբլի, որից 34,2 միլիոն ռուբլին նախատեսված է հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման, իսկ 32,2 միլիոն ռուբլին՝ կապիտալ նորոգման համար։ Այսպիսով, արդյունաբերության մեջ լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացումների նորմային համապատասխանող հիմնական ֆոնդերի ծառայության միջին ժամկետը կազմում է 30 տարի։ Այդ նույն թվականին մեքենաշինության ու մետաղամշակման ճյուղի հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման ամորտիզացիայի նորման կազմել է 3,8 տոկոս, որը համապատասխանում է 26 տարվա միջին ծառայության ժամկետին։ Հաշվումները ցույց են տալիս, որ ծառայության համանման ժամկետ է սահմանված նաև հաստոցների ու սարքավորումների համար։ Այսպես, խառատային պտուտակակարիչ հաստոցների ծառայության միջին ժամկետը սահմանված է 25 տարի, մասնագիտացված ծանր հաստոցների համար՝ 30 տարի, դարբնոցա-մամլիչային մեքենաների առանձին խմբերի համար՝ 20—30 տարի և այլն։

Տեխնիկական առաջընթացի ներկա պայմաններում, երբ հիմնական ֆոնդերի բարոյական մաշումը տեղի է ունենում շատ արագ, ծառայության սահմանված ժամկետը բավականին բարձր է, այսինքն, գործող ամորտիզացիոն նորմաները շատ ցածր են։ Այդ մասին է վկայում նաև այն, որ արդյունաբերության մի շարք ճյուղերում հիմնական ֆոնդերի ելքի գործակիցը մոտենում է հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացումների նորմային։ Օրինակ, ՀՍՍՀ արդյունաբերության մեքենաշինության և մետաղամշակման ճյուղերում 1968 թ. ելքի գործակիցը կազմել է 2,3 տոկոս, իսկ

ամորտիզացիոն հատկացումների նորման՝ 3,8 տոկոս, անտառային փայտամշակման և ցելյուլոզ-թղթի արդյունաբերությունում համապատասխանաբար ելքը կազմել է 4,6 տոկոս, իսկ ամորտիզացիոն հատկացման նորման՝ 3,7 տոկոս։ Ելքի գործակիցը ամորտիզացիոն հատկացման նորմային է հավասարվում նաև թեթև ու սննդի արդյունաբերությունում։

Ամորտիզացիոն հատկացումները ցածր են այն պատճառով, որ դրանք սահմանելիս հաշվի չի առնվել հիմնական ֆոնդերի իրական ծառայության ժամկետը, հետևապես և այդ հատկացումները լրիվ չեն համապատասխանում ֆոնդերի փաստացի մաշվածքին։

Լրիվ վերականգնման համար ամորտիզացիոն նորմաներում բավարար չափով հաշվի չի առնվում հիմնական ֆոնդերի էքստենսիվ և ինտենսիվ օգտագործման հետևանքով առաջացած ֆիզիկական մաշվածքը։ Հայտնի է, որ հիմնական ֆոնդերի լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացումները հիմնականում կատարվում են նախօրոք սահմանված նորմաներով՝ ըստ ծառայության ժամանակի։ Հիմնական ֆոնդերի օգտագործման ինտենսիվությունը բարձրացվելու դեպքում, համապատասխանաբար մեծանում է նաև ֆիզիկական մաշվածքը և, ըստ գործող կարգի, այն ազդեցություն չի թողնում լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացման չափի վրա (բացառությամբ ավտոտրանսպորտի)։

Հիմնական ֆոնդերի ինտենսիվ օգտագործումն, իհարկե, որոշ չափով ազդում է կապիտալ նորոգման ամորտիզացիոն հատկացման չափի վրա։ Բայց, ինչպես հայտնի է, կապիտալ նորոգումը ամբողջությամբ չի կարող վերացնել ինտենսիվ օգտագործման հետևանքով առաջացած մաշվածքը. նրանից հետո մնում է մնացորդային մաշվածություն, որը հանգեցնում է հիմնական ֆոնդերի, հատկապես նրա ակտիվ մասի, ժամանակից շուտ շարքից դուրս գալուն։

Ժամանակից շուտ շարքից դուրս գալով, մեքենան ամբողջությամբ չի ամորտիզացվում, տեղի է ունենում այսպես կոչված «թերամորտիզացիա»։ Հեռանդես այն ձեռնարկությունները, որոնք բարձրացնում են մեքենայի էքստենսիվ ու ինտենսիվ օգտագործման աստիճանը, ունենում են ավելի շատ թերամորտիզացիա, քան այն ձեռնարկությունները, որոնց աշխատանքի համար հաշվարկված են եղել ամորտիզացիոն նորմաները։

Այսպիսով, ամորտիզացիոն նորմաների կատարելագործման ընթացքում անհրաժեշտ է վերացնել այս ոչ-նորմալ երևույթը և լրիվ վերականգնման ամորտիզացիոն հատկացումների ժամանակ ևս օգտագործել համապատասխան կարգավորիչ գործակիցներ, ինչպես դա արվում է կապիտալ նորոգման ամորտիզացիոն հատկացման ժամանակ։

Ամորտիզացիոն նորմաները վերանայելիս անհրաժեշտ է ճշտել, թե հիմնական ֆոնդերի որ ֆիզիկական մաշվածքը պետք է ընկած լինի ամորտիզացիոն նորմաների հիմքում, քանի որ հիմնական արտադրական ֆոնդերը ֆիզիկական մաշվածության են ենթարկվում թե արտադրական սպառման և թե անգործության հետևանքով՝ բնության ուժերի ազդեցության տակ։ Ինչպես նշում է Կ. Մարքսը, «մեքենայի նյութական մաշվածքը երկու տեսակ է լինում։ Մեկն առաջանում է նրա գործածվելուց, ինչպես դրամները մաշվում են շրջանառությունից, մյուսը՝ չգործածվելուց, ինչպես սուրը պարապ մնալուց

ժանգոտվում է պատյանում։ Վերջին դեպքում տարերքի կերակուր է դառնում այն»[1]։

Արտադրության մեջ հիմնական ֆոնդերի օգտագործման ընթացքում մաշվածքի չափը կախված է մի շարք գործոններից և ամենից առաջ՝ նրանց էքստենսիվ ու ինտենսիվ օգտագործման աստիճանից։ Էքստենսիվ օգտագործման դեպքում ավելացվում են աշխատանքային ժամերը, որը տեղի է ունենում կամ մի հերթափոխության ընթացքում, կամ հերթափոխության գործակիցն ավելացնելով։

Այն դեպքում, երբ հիմնական ֆոնդերի ֆիզիկական մաշվածքը առաջանում է արտադրության ոլորտում, նրանց օգտագործման հետևանքով, հիմնական ֆոնդերի արժեքի մի մասը փոխանցվում է արտադրված արդյունքի արժեքին։ Ուստի ամորտիզացիայի հիմքում պետք է ընկած լինի արտադրության պրոցեսում առաջացած մաշումը։ Իսկ հիմնական ֆոնդերի այն մաշվածքը, որը հետևանք է բնության ուժերի ազդեցության, դրանց անգործության մատնված ժամանակի ընթացքում, զուտ կորուստ է, որը կարող է լինել ինչպես բացահայտ, այնպես էլ քողարկված։ Այդ բացահայտ կորուստը չպետք է հիմք ընդունել ամորտիզացիոն հատկացումների չափը սահմանելու ժամանակ։ Սակայն ամորտիզացիոն հատկացումների պլանավորման, հաշվառման և օգտագործման կարգի մասին ներկայումս գործող կանոնագրությամբ նախատեսվում է լրիվ վերականգնման համար ամորտիզացիայի ենթարկել նաև պաշարների ձևով ձեռնարկությունների հաշվեկշռում գտնվող սարքերը, տրանսպորտային միջոցները և այլն[2]։ Մեր կարծիքով, այս կարգը ճիշտ չէ. քանի որ հակասում է ամորտիզացիայի էությանը։ Ամորտիզացիոն հատկացումները արտադրության պրոցեսում հիմնական ֆոնդերի օգտագործման չափի արտացոլումն են որոշակի արդյունքում։ Ճիշտ է, վերոհիշյալ կանոնագրությամբ նախատեսվող կարգը որոշակի խթանիչ նշանակություն ունի ձեռնարկությունների հիմնական ֆոնդերի լրիվ օգտագործման համար, սակայն նոր պայմաններում, երբ այդ նպատակին է ծառայում նաև ֆոնդավճարը, ամորտիզացիոն գործող կարգը իրեն չի արդարացնում։ Հետևապես, անհրաժեշտ է վերանայել պաշարներում գտնվող սարքավորումներից ամորտիզացիոն հատկացումներ կատարելու կարգը։

Արտադրական հիմնական ֆոնդերի ֆիզիկական մաշվածության հետևանքով, ինչպես նշվեց, առաջանում է նաև քողարկված կորուստ։ Դա առաջանում է հիմնական ֆոնդերի փաստացի օգտագործման և հասարակական միջինի (նորմատիվի) տարբերությունից, կապիտալ նորոգման ընթացքում սարքավորման երկար անգործությունից, խիստ անհրաժեշտ ռեզերվային սարքավորման առկայությունից և այլն։ Քանի որ հնարավոր չէ այդ կորուստն անջատել արտադրական օգտագործումից առաջացած ֆիզիկական մաշվածքի արժեքի կորստից, ապա այն նույնպես անհրաժեշտ է հիմք ընդունել ամորտիզացիոն հատկացումների ժամանակ։

Այսպիսով, հիմնական ֆոնդերի այն մաշվածքը, որը արտադրության պրոցեսում դրանց օգտագործման հետևանք չէ՝ բացառությամբ անհրաժեշտ

---

1 Կ. Մարքս, Կապիտալ, Երևան, 1954, հ. 1, էջ 424։

2 Положение о порядке планирования, начисления и использования амортизационных отчислений в народном хозяйстве, М., 1962 г., стр. 5.

ոնդերվի, չի կարելի հիմք ընդունել ամորտիզացիոն հատկացումները սահմանելիս։

Հիմնական ֆոնդերի ամորտիզացիոն հատկացումների 1963 թ. ընդունված նորմաները դիֆերենցված են առանձին կամ մի խումբ սարքավորումների համար։ Սակայն այդ դիֆերենցվածությունը հիմնական ֆոնդերի առանձին տեսակների համար բավարար չէ։ Մասնավորապես բավարար չի կարելի համարել այն, որ ամբողջ ավտոմատ գծերի համար ամորտիզացիոն հատկացման մի նորմա է սահմանված։

ՍՍՀՄ ամբողջ արդյունաբերության մասշտաբով 1967 թ. գործել են 6840 ավտոմատ գծեր[3], որոնք աշխատանքի կատարման տեխնիկական, ֆիզիկական և քիմիական հատկություններով միմյանցից տարբերվում են։ Այսպիսի պայմաններում սխալ է միևնույն ամորտիզացիոն հատկացման նորմայով մասհանում կատարել թե սև մետալուրգիայի 329, թե քիմիական արդյունաբերության 151, և թե մեքենաշինության ու մետաղամշակման 3212 ավտոմատ գծերից։ Անհրաժեշտ է ավտոմատ գծերի առանձին խմբերի համար սահմանել տարբեր ամորտիզացիոն նորմաներ։ Դա առավել լրիվ կարտացոլի փաստացի իրավիճակը։

Ամորտիզացիոն նորմաների դիֆերենցվածության հիմքում, շատ հաճախ, դրված է մեքենաների և սարքավորումների ֆիզիկական քաշը, այլ ոչ թե դրանց տեխնիկական բնութագիրը և ծառայության ժամանակը։ Այսպես. օրինակ, ունիվերսալ հատուկ հաստոցների համար նախատեսված նորմաները պայմանավորված են նրանց քաշով. մինչև 10 տոննա քաշ ունեցող հաստոցների համար սահմանված է առանձին նորմա, 10—100 տոննա քաշ ունեցող հաստոցների համար՝ մեկ այլ նորմա և 100 տոննայից բարձր հաստոցների համար՝ մի այլ նորմա։ Բոլոր այն մամլիչների համար, որոնց քաշը 30 տոննայից բարձր է, սահմանված է մեկ նորմա։ Նման մոտեցումը, ըստ մեզ, ճիշտ չէ։ Մեքենաների ֆիզիկական քաշով չէ, որ որոշվում է նրանց ծառայության ժամանակը, հետևապես և ամորտիզացիոն նորման, այլ՝ հիմնական ֆոնդերի տեխնիկական պարամետրերով, նրանց կոնստրուկտորական առանձնահատկություններով, հզորություններով, արտադրողականությամբ և այլն։

Գործող ամորտիզացիոն նորմաների հաշվարկման սիստեմում բավարար ուշադրություն չի դարձվում նաև նոր տեխնիկայի ամորտիզացիոն նորմաների հաշվարկմանը։ ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության մեջ ամեն տարի ներդրվում են բազմաթիվ նոր տիպի հաստոցներ ու սարքավորումներ։ Միայն 1967 թ. դրանց թիվը հասել է 3258-ի, իսկ 1968 թ.՝ 2707-ի, այդ թվում համապատասխանաբար 252 և 290 մետաղահատ հաստոցներ, 87 և 73 դարբնոցամամլիչային սարքավորումներ[4]։ Ամորտիզացիայի սիստեմը պետք է անհրաժեշտորեն ելնի նորագույն սարքավորումներից ամորտիզացիոն հատկացումների նորմաների հաշվարկման առանձնահատկություններից։ Գործող կարգով այդ տիպի սարքավորումների ամորտիզացիոն հատկացման նորմաների նախագծի մշակումը, հաշվարկները և հիմնավորումը կատարում են մինիստրությունները ու գերատեսչությունները և ներկայացնում են ՍՍՀՄ պետպլանի

---

[3] «Народное хозяйство СССР в 1967 г.», статистический ежегодник, М., 1968, стр. 270.

[4] «Народное хозяйство СССР в 1968 г.», М., 1969, стр. 267.

հաստատմանը, իսկ պատճեն՝ ՍՍՀՄ Պետշին, ՍՍՀՄ ֆինանսների մինիստրություն և ՍՍՀՄ ԿՎՎ։ Մինչև այդ նորմաների հաստատումը, սակայն ոչ ավելի քան վեց ամիս, ձեռնարկությունները և կազմակերպությունները ամորտիզացիոն հատկացումներ կարող են կատարել նախագծային նորմաներով։

Ամորտիզացիոն նորմաների սահմանման այս կարգը այնքան էլ չի շահագրգռում նոր տիպի մեքենա ձեռք բերող ձեռնարկությանը, քանի որ նրան հայտնի չէ, թե նոր տիպի մեքենայի ձեռք բերման համար ներդրվող միջոցները քանի տարում կվերականգնվեն։ Ուստի, մեր կարծիքով, ավելի նպատակահարմար է նոր տիպի մեքենայի ամորտիզացիոն նորմայի մշակումը և հաստատումը կատարել նոր տիպի մեքենայի իրացումից առաջ։ Ըստ որում դրանք պետք է կատարեն նախագծային-նախահաշվողական ինստիտուտները և տրվյալ մեքենան արտադրող ձեռնարկության վերադաս կազմակերպությունը։ Նոր մեքենան իրացնելիս գնի և տեխնիկական այլ պարամետրերի հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև սահմանել վերջնական ամորտիզացիոն նորմա, որը ձեռնարկությանը հնարավորություն կտա առավել ճշտորեն որոշելու այդ մեքենայի ներդրման տնտեսական արդյունավետությունը։

Ամորտիզացիայի սիստեմի հետագա կատարելագործման կարևոր հարցերից մեկն այն ժամկետի որոշումն է, որի ընթացքում պետք է կատարել ամորտիզացիոն հատկացումը։ Ժողովրդական տնտեսության մեջ ամորտիզացիոն հատկացումների պլանավորման, հաշվարկման և օգտագործման կարգի մասին կանոնադրությունում նշվում է, որ «լրիվ և մասնակի վերականգնման համար ամորտիզացիոն հատկացումներ կատարվում են հիմնական ֆոնդերի փաստացի ծառայության ժամկետի ընթացքում»։ Այս բնորոշումից հետևում է, որ ամորտիզացիոն հատկացում կարելի է կատարել նաև այնպիսի հիմնական ֆոնդերից, որոնք անցել են իրենց նորմատիվային ծառայության ժամկետը, ուրեմն և լրիվ վերականգնել են իրենց սկզբնական արժեքը, սակայն շարունակում են աշխատել արտադրության մեջ։ Ստացվում է, որ այն հիմնական ֆոնդը, որը լրիվ վերականգնել է իր սկզբնական արժեքը, շարունակում է ամորտիզացվել՝ ելնելով այդ ֆոնդի նախասկզբնական արժեքից։ Այդպիսով տեղի ունի, այսպես կոչված, «գերամորտիզացիա»։ Մինչդեռ դա հիմնական ֆոնդերը նորմատիվային ծառայությունից հետո արտադրության մեջ օգտագործելու շնորհիվ տվյալ ձեռնարկության ստացած օգուտի մի մասն է, բայց, որը սխալ հաշվարկի հետևանքով հանդես է դալիս որպես ամորտիզացիա։

Դա հետևանք է սահմանված ամորտիզացիոն նորմայի և հիմնական ֆոնդերի ծառայության ժամկետների անհամապատասխանության։ Ստացվում է, որ ամորտիզացիոն նորման սահմանված է եղել ավելի բարձր, քան անհրաժեշտ է հիմնական ֆոնդի վերականգնման համար նրա ամբողջ ծառայության ընթացքում։

Ամորտիզացիոն հատկացման նորման բարձր լինելու հետևանքով կորցրած օգուտը վերականգնելու, ինչպես նաև տեխնիկական առաջընթացի և հիմնական ֆոնդերի նորացումը արագացնելու, թողարկվող արտադրանքի ինքնարժեքի ճիշտ հաշվարկելու համար, նորմատիվային ծառայության ժամկետը լրանալուց հետո (երբ ամորտիզացման ենթարկվող հիմնական ֆոնդերի արժեքը լրիվ վերականգնվել է, իսկ վերջինը դեռ շարունակում է աշխատել) անհրաժեշտ է դադարեցնել լրիվ վերականգնման համար կատարվող ամորտի-

զացիոն հատկացումը և շարունակել ամորտիզացիոն մասնանում կատարել միայն կապիտալ նորոգման համար։

Բայց շատ հաճախ մեքենաները արտադրության մեջ աշխատում են ոչ թե նորմատիվային ծառայության ժամկետից ավելի, այլ ընդհակառակը՝ շուտ են շարքից դուրս դալիս։ Նման դեպքում հիմնական ֆոնդերի արժեքը հնարավոր չի լինում վերականդնել ամորտիզացիոն հատկացումների միջոցով, իսկ դա տվյալ ձեռնարկության համար զուտ վնաս է։ Թերամորտիզացիայի առաջացման հիմնական պատճառը ամորտիզացիոն հատկացումների նորմաների ցածր լինելն է։ Աշխատամիջոցների փաստացի ծառայության ժամկետի ընթացքում, ամորտիզացիոն հատկացման ցածր նորմայի հետևանքով, բարձրանում է ձեռնարկության օդուտը։ Հետևապես, թերամորտիզացիայի վնասն անհրաժեշտ է ծածկել ի հաշիվ ձեռնարկության օգուտների, որոնք արհեստականորեն բարձրացվել են։ Սակայն այդ վնասը պետք է մարվի ոչ թե մի տարվա օդուտների հաշվին, ինչպես առաջարկվում է գործող հրահանգներում, այլ հիմնական ֆոնդերի նորմատիվային ու փաստացի ծառայության ժամկետների տարբերության ընթացքում՝ դարձյալ ձեռնարկության օգուտների հաշվին։

Ամորտիզացիոն սիստեմի կատարելագործման ուղղությամբ կարևոր քայլ է ՍՍՀՄ Մինիստրների սովետի կողմից հաստատված «Սոցիալիստական ոլտական արտադրական ձեռնարկությունների կանոնադրությունը»[5]։ Այդ կանոնադրությամբ նախատեսված է ձեռնարկության տրամադրության տակ թողնել կապիտալ նորոգման համար կատարված ամորտիզացիոն հատկացումների 90 տոկոսը և վերաբաշխել միայն 10 տոկոսը։ Սակայն, ինչպես ցույց է տալիս փաստական նյութի վերլուծությունը, առօրյայում կապիտալ նորոգման ամորտիզացիոն հատկացումներից վերաբաշխվում է ավելի քան 10 տոկոսը։ Այսպես, Երևանի Ձերժինսկու անվան հաստոցաշինական, Լենինի անվան էլեկտրամեքենաշինական, էլեկտրալամպերի և այլ գործարանների հիմնական ֆոնդերի և ամորտիզացիոն ֆոնդի շարժման տարեկան հաշվետվության տվյալներից երևում է, որ կապիտալ նորոգման համար ամորտիզացիոն հատկացումներից անվերադարձ վերաբաշխման կարգով այդ գործարանները ուրիշ ձեռնարկություններին են տրամադրել իրենց համապատասխան ամորտիզացիոն հատկացումների 11—34 տոկոսը։ Այս կարգը թուլացնում է ձեռնարկությունների շահագրգռվածությունը կապիտալ նորոգման փաստացի ծախսերի սլակասեցման գործում, քանի որ թե՛ տնտեսումը և թե՛ գերածախսը ոչնչով չի ազդում ձեռնարկության տնտեսական գործունեության վրա։ Հետևապես կապիտալ նորոգման համար ամորտիզացիոն հատկացումների անվերադարձ վերաբաշխման այս կարգն ունի լուրջ թերություններ։ Ձեռնարկություններում տնտհաշվարկը արմատավորելու և հետագայում էլ ավելի ամրապնդելու համար անհրաժեշտ է վերանայել կապիտալ նորոգման ամորտիզացիոն հատկացումների անվերադարձ վերաբաշխման կարգը և նրանց տրամադրության տակ թողնել կապիտալ նորոգման ամորտիզացիոն հատկացման ամբողջ գումարը։

Այնուհետև, պլանավորման ու տնտեսական խթանման նոր համակարգի

---

5 Положение о социалистическом государственном производственном предприятии, М., 1966, стр. 4.

պայմաններում աշխատող ձեռնարկություններին իրավունք է վերապահված լրիվ վերականգնման համար ամորտիզացիոն մասհանումների 30—50 տոկոսը հատկացնել արտադրության զարգացման ֆոնդին։ Մեր կարծիքով, արտադրության զարգացման ֆոնդին հատկացվող ամորտիզացիոն մասհանումների գումարը իրենց չափերով այնքան էլ չեն համապատասխանում առանձին ձեռնարկությունների պահանջներին։ ՍՍՀՄ մինիստրություններին ու գերատեսչություններին և միութենական հանրապետությունների մինիստրների սովետներին իրավունք է վերապահված անհրաժեշտության դեպքում՝ արտադրության զարգացման ֆոնդի համար ամորտիզացիայից կատարվող մասհանումներն ավելացնել կամ պակասեցնել՝ ըստ արդյունաբերական ճյուղերի, ձեռնարկությունների խմբերի, հարկ եղած դեպքում նաև առանձին ձեռնարկություններ։ Բայց նույնիսկ այս դեպքում արտադրության զարգացման ֆոնդի համար մասհանվող ամորտիզացիոն հատկացման չափը (մինչև 50 տոկոս), մեր կարծիքով այնքան էլ ճիշտ չէ որոշված. այն ամբողջությամբ չի հաշվի առնում հիմնական ֆոնդերի կազմում սարքավորումների տեսակարար կշիռը, մեքենայական պարկի հասակային կազմը, մաշվածության աստիճանը և փաստացի ելքի չափը։

Քանի որ հիմնական ֆոնդերից ամորտիզացիոն հատկացում է կատարվում, և ստեղծվում է համապատասխան ֆոնդ, որը պետք է ծառայի հիմնական ֆոնդերի պարզ վերարտադրության ֆինանսավորման համար, ապա, մեր կարծիքով, ձեռնարկության տրամադրության տակ պետք է թողնել այնքան միջոցներ, որքան անհրաժեշտ է նրա պարզ վերարտադրությանը տվյալ պահին։ Իսկ ֆոնդի այն մասը, որ մնում է ամորտիզացիոն հատկացումների օգտագործման մի շարք առանձնահատկությունների շնորհիվ, անհրաժեշտ է տրամադրել պետական բյուջեին, որը կօգտագործվի կենտրոնացված կարգով ընդլայնված վերարտադրության ֆինանսավորման նպատակներով։

Այսպիսով, արտադրության զարգացման ֆոնդին մասհանվող ամորտիզացիայի չափը պետք է կախման մեջ դրվի բարոյական ու ֆիզիկական մաշվածության հետևանքով շարքից դուրս եկած հիմնական ֆոնդերի չափից, որը ՍՍՀՄ արդյունաբերության հիմնական ճյուղերում ունի այսպիսի տեսք (տոկոսներով՝ հիմնական ֆոնդերի տարեսկզբի արժեքի նկատմամբ)[6].

Ինչպես երևում է աղյուսակից, հիմնական ֆոնդերի ելքը առանձին տարիների մեծ տատանումներ է տվել։ Հետևապես, արտադրության զարգացման ֆոնդին մասհանվող նորմատիվը սահմանելիս նպատակահարմար է ել-

Արդյունաբերության ճյուղեր	1964 թ.	1965 թ.	1966 թ.	1967 թ.	1968 թ.	Ելքի միջին գործակիցը 1964—68 թթ.
Էլեկտրաէներգետիկա	0,2	0,4	0,6	0,9	0,6	0,54
Սև մետալուրգիա	0,6	1,2	1,3	1,9	1,1	1,22
Քիմիական արդյունաբերություն	0,8	1,4	1,7	2,2	1,4	1,5
Մեքենաշինություն, մետաղամշակում	1,0	1,4	1,6	2,1	1,5	1,52

6 Տվյալները վերցված են «Народное хозяйство СССР» վիճակագրական տարեգրքերից (1964, 1965, 1966, 1967, 1968 թթ.)։

նել ոչ թե մեկ տարվա, այլ մի շարք տարիների միջին-թվաբանականից։ Մեր կարծիքով, նպատակահարմար է նորմատիվը սահմանելիս ելնել նախորդ հինգ տարիների եղբի միջին մեծությունից։

Այսպես, հանձնարարվող եղանակով հաշվարկված վերականգնման ամորտիզացիոն հատկացումից արտադրության զարգացման ֆոնդին մասհանվող նորմատիվը, ելնելով 1964—1968 թթ. եղբի միջին գործակցից, կլինի՝

Արդյունաբերության ճյուղեր	Եղբով վերականգնման ամորտիզացիոն հատկացումից արտադրության զարգացման ֆոնդին մասհանվող նորմատիվը	
	հաստատված է	հանձնարարվում է
Էլեկտրաէներգետիկա	25	20,7
Սև մետալուրգիա	35	33,8
Քիմիական արդյունաբերություն	40	40,5
Մեքենաշինություն և մետաղամշակում	40	40,0

Հաստատված նորմատիվներից հանձնարարվող եղանակով հաշվարկվածների շեղումները, ինչպես երևում է աղյուսակից, այնքան էլ մեծ չեն։ Սակայն նորմատիվի սահմանման հանձնարարվող եղանակը ձեռնարկություններին առավել չափով կխրախուսի արագացնելու հիմնական ֆոնդերի եղբի տեմպերը։

Այսպիսի միջոցառումները, թվում է, կնպաստեն կատարելագործելու ամորտիզացիոն հատկացումների հաշվարկման, պլանավորման և օգտագործման հետագա դրվածքը։

О СОВЕРШЕНСТВОВАНИИ ПОРЯДКА АМОРТИЗАЦИОННЫХ ОТЧИСЛЕНИЙ

В. Е. ГРИГОРЯН

Резюме

В статье рассматривается действующий порядок амортизационных отчислений и указывается на необходимость ее совершенствования. В частности предлагается: производить данные отчисления с учетом экстенсивного и интенсивного использования основных фондов; дифференцировать амортизационные нормы на полное восстановление по отдельным группам оборудования, усовершенствовать методы расчета этих отчислений для новых типов машин. По мнению автора, указанные предложения по совершенствованию действующего порядка амортизационных отчислений будут способствовать повышению эффективности промышленного производства.